Գործընկերություն հանուն լավ կառավարման

Եվրոպական միություն
եւ Եվրոպայի խորհուրդ

#StrongerTogether

ԱՊՐԻԼ, 2025թ.

ԱՐԵՒԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Արեւելյան գործընկերության տարածաշրջանում տնտեսական հանցագործությունների կանխարգելում եւ դրանց դեմ պայքար

- Գործընկերների միջեւ համագործակցության դյուրացման եւ ուղղորդող գործիքներ տրամադրելու միջոցով ընդլայնվել են տարածաշրջանի պետական հաստատությունների՝ **կոռուպցիոն ռիսկերի գնահատում եւ կառավարում** իրականացնելու կարողությունները:

- **Ընդլայնված տարածաշրջանային համագործակցության միջոցով** բարձր իրազեկվածություն եւ գործնական գիտելիքներ՝ **պետական-մասնավոր գործընկերության** վերաբերյալ, որպես նորարարական մոտեցում մասնավոր հատվածի եւ պետական մարմինների միջեւ ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարի հարցում տեղեկությունների փոխանակման բարելավման վերաբերյալ:

- Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում եւ Ուկրաինայում Ֆինանսական հետախուզության մարմինների կողմից կիրառվող՝ **ռազմավարական վերլուծության** համախմբված **ընթացակարգեր եւ գործիքներ:**

- Ծրագրի շրջանակներում վերապատրաստում անցած **վերլուծաբանների բանկի** ստեղծում, որոնք իրենց գործընկերների շրջանում հանդես կգան որպես տարածողներ եւ կառուցվածքային մոտեցում կներդնեն **փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ռիսկերի գնահատման հարցում:**

Հավասարության եւ խտրականության բացառման խթանում

- Պետական հաստատությունների, օմբուդս հաստատությունների եւ հավասարության հարցերով մարմինների շուրջ 350 ներկայացուցիչների ընդլայնված կարողություններ՝ **ատելությանը եւ ռասիզմին օրենսդրական, քաղաքականության եւ գործնական արձագանքները** եվրոպական չափանիշներին համահունչ առավել բարելավելու համար:

- Արեւմտյան Բալկանների եւ Արեւելյան գործընկերության տարածաշրջանի հանրային հաստատությունների, հավասարության հարցերով մարմինների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար **գործընկերների միջտարածաշրջանային փոխանակումների** հաստատում, որոնք կենտրոնացված են ատելության խոսքի դեմ պայքարին ուղղված հավասարության բարեփոխումների եւ կարիքավոր խմբերի, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների, ռոմա եւ ԼԳԲՏԻ անձանց հանդիպած խտրականության եւ բռնության վերացման համար լուծումներ ուսումնասիրելու վրա:

- **Երիտասարդ եվրոպական դեսպանների (ԵԵԴ-ներ)** ընդլայնված հմտություններ այն մասին, թե ինչպես արդյունավետորեն վերացնել ատելության խոսքն ու խտրականությունը եւ իրենց համայնքներում տարբերություն ստեղծել հավասարության եւ բազմազանության խթանման միջոցով:

Կանանց դեմ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելում եւ դրանց դեմ պայքար

- Իրենց առօրյա գործունեության մեջ կանանց համար արդարադատության մատչելիության խթանման նպատակով **Արեւելյան գործընկերության տարածաշրջանի իրավական ոլորտի շուրջ 300 մասնագետների կարողությունների զարգացում՝ ծրագրի մենթորային մեխանիզմի** ավագ մենթորների աջակցությամբ:

- **Ընդլայնված համագործակցություն** տարածաշրջանի **իրավաբանական բարձրագույն ուսումնական հաստատությունների** միջեւ՝ իրավաբանական ոլորտի ապագա սերնդի մասնագետների աշխատանքում հավասարություն ներդնելու համար՝ այդպիսով նպաստելով կանանց համար արդարադատության մատչելիության մակարդակի կայուն բարելավմանը:

- **Դատական վերապատրաստման հաստատությունների տարածաշրջանային ցանցի ստեղծում**, որը նպաստում է գործընկերների միջեւ գիտելիքների փոխանակմանը եւ ուսուցման նոր մեթոդների մշակմանը՝ կանանց համար արդարադատության մատչելիության մակարդակը բարձրացնելու համար:

Եվրոպական միությունը եւ Եվրոպայի խորհուրդն Արեւելյան գործընկերության երկրների հետ աշխատում են ավելի արդյունավետ կառավարման, իրավունքի գերակայության խթանման եւ քաղաքացիների կյանքի բարելավման ուղղությամբ: Նրանք 2014 թվականին մեկնարկել են «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը, որով աջակցություն է տրամադրվում երկրների՝ եվրոպական չափանիշներին համահունչ արդարադատության ամրապնդման, տնտեսական հանցագործությունների հակազդման, հավասարության եւ խտրականության բացառման խթանման, կանանց համար արդարադատության մատչելիության մակարդակի բարձրացման եւ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարին ուղղված ներպետական բարեփոխումների իրականացման համար: Դա կատարվում է շահառու երկրների կարիքներին աջակցելու համար համապատասխանեցված տեխնիկական օժանդակության եւ Արագ արձագանքման մեխանիզմի միջոցով, որը Վենետիկի հանձնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի այլ մարմինների կողմից ըստ պահանջի օրենսդրական փորձաքննություն եւ քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության տրամադրման գործիք է: Ծրագրի ընթացիկ փուլը (3-րդ փուլ), որն ընթանում է 2023 թվականից մինչեւ 2027 թվականը, հիմնված է նախորդ փուլերի շրջանակներում գրանցված արդյունքների եւ առաջընթացի վրա:

Ավելին մեր աշխատանքի մասին՝
https://go.coe.int/VzS8G

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից
Եվրոպական միություն
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE
Համաֆինանսավորվում և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից